ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

ԹԵՄԱԿԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԸ

—

Յանձնաժողովը որոշեց առաջիկայ յոբելեանի առիթով հրատարակել «Նիւթեր հայ դպրոցների պատմութեան» վերնագրով ժողովածու, ուր կը մտնեն հայ դպրոցների պատմութեան վերաբերեալ ամեն տեսակ նիւթեր հինգերորդ դարից սկսած մինչև մեր օրերը։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՕԳՏԻՆ

Թիֆլիզի թեմական յոբելեանական յանձնաժողովը իր սրբազան նախագահի միջոցով շնորհակալութեամբ ստացաւ յօգուտ դպրոցական ֆոնդի՝ Զարգարեան և Վարդապարեան առևտրական տնից 500 ռուբլի և Տէր-Պետրոսեան մանուկներից 5 ռ. 80., ընդամենը 505 ռուբլի 80 կոպէկ։

Քարտուղար-անդամ՝

Գիւտ ա. ք. Աղանեան